Հավելված N 7
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 20-ի N 152 - Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺՆԻ

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժինը (այսուհետև՝ Բաժին) Տեսչական մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից է:

2. Բաժնի կանոնադրությունը հաստատում է Տեսչական մարմնի ղեկավարը:

3. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեսչական մարմինների մասին» օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Տեսչական մարմնի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ

II. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Բաժնի գործունեության հիմնական նպատակն է՝

1) հանրությանը, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտներին Տեսչական մարմնի իրավասությունների, գործառույթների, ձեռնարկած քայլերի ու նորմատիվ իրավական ակտերի պահանջների մասին իրազեկումը,

2) իրազեկման միջոցով բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության ու աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների

առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների մասին տեղեկացումը:

5. Բաժնի գործունեության հիմնական խնդիրներն են՝

1) տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների կատարելագործումը,

2) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների, ինչպես նաև քաղաքացիների իրազեկվածության աստիճանի բարձրացումն առողջապահության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում,

3) ստեղծված վերլուծական, վիճակագրական և այլ նյութերի համակարգված արխիվի շարունակական թարմացում:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Բաժնի գործառույթներն ուղղված են սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը:

7. Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Տեսչական մարմնի իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրի մշակումը,

2) Տեսչական մարմնի ղեկավարի, այլ պաշտոնատար անձանց և զանգվածային լրատվության միջոցների միջև համագործակցության ապահովումը, ինչպես նաև հարցազրույցների, մամուլի ասուլիսների, ճեպազրույցների անցկացումը, տարածում հայտարարություններ և հաղորդագրություններ՝ Տեսչական մարմնի գործունեության ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ,

3) Տեսչական մարմնի աշխատանքների մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով զանգվածային լրատվության միջոցների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ աշխատանքային հանդիպումների կազմակերպումը և անցկացումը,

4) հասարակությանը իրազեկումը՝ Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների, Տեսչական մարմնի ղեկավարի, այլ պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ՝ մամուլի հաղորդագրություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, տեսանյութեր, լուսանկարներ և այլ տեղեկատվական նյութեր պատրաստելու և տարածելու միջոցով,

5) բաժնին առնչվող գործառույթներից ելնելով՝ կազմել ուղեցույցներ, պատրաստել կամ մշակել տեսանյութեր ու լուսանկարներ, տեղեկատվական թերթիկներ,

6) հասարակական միավորումների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը, համատեղ աշխատանքային միջոցառումների պլանավորումը և իրականացումը, դրանց լուսաբանման համատեղ կազմակերպումը, տեղեկատվության փոխանակումը,

7) Տեսչական մարմնի ղեկավարի կամ նրա հանձնարարությամբ այլ պաշտոնատար անձանց համար զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հաղորդագրությունների, հրապարակումների տեսությունների, այլ տեղեկանքների, վերլուծական նյութերի պատրաստում,

8) Տեսչական մարմնի ղեկավարի մասնակցությամբ անցկացվող միջոցառումների կազմակերպումը,

9) պատրաստել և տարածել մամուլի հաղորդագրություններ, Բաժնին վերապահված իրավասությունների շրջանակներում հանդես է գալիս պարզաբանումներով ու հայտարարություններով,

10) զանգվածային լրատվության միջոցներով ելույթներում, մշտական թեմատիկ խորագրերում, հեռուստահաղորդումներում Տեսչական մարմնի պաշտոնատար անձանց մասնակցության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում և դրանց ընթացքի ապահովում,

11)զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների, այդ թվում՝ Տեսչական մարմնի ղեկավարի հետ և Տեսչական մարմնի պաշտոնատար անձանց մասնակցությամբ աշխատանքային հանդիպումների կազմակերպում,

12) Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկման իրականացնում,

13) սահմանված կարգով Տեսչական մարմնում լրագրողների հավատարմագրման կազմակերպում և անցկացում,

14) պաշտոնական կայքէջի և լրատվական այլ խողովակների միջոցով Տեսչական մարմնի գործունեության լուսաբանման ապահովում,

15) Թեժ գծով, գրավոր կամ էլեկտրոնային հասցեով ստացվող դիմում-բողոքների գրանցամատյանի վարում և վիճակագրության ամփոփում՝ ամսական հաշվետվությունների տեսքով,

16) զանգվածային լրատվության միջոցներից և քաղաքացիներից ստացվող հարցումների, բողոքների օպերատիվ արձագանքումը (թեժ գիծ) և որոշակի թեմաների վերաբերյալ իրենց դիրքորոշման և հասարակական կարծիքի ձևավորման մասին իր իրավասության շրջանակում դիրքորոշման ներկայացում Տեսչական մարմնի ղեկավարին,

17) տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների շրջանում իրազեկվածության բարձրացման նպատակով դասընթացների, սեմինարների, քննարկումների կազմակերպում, ձեռնարկների, բուկլետների, տեղեկանքների թողարկման և հրատարակման կազմակերպում, զանգվածային լրատվության միջոցների միջոցով տեղեկատվության փոխանցում,

18) Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների իրազեկումը իրենց գործունեությանն առնչվող, Տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի կամ հրապարակված ուղեցույցների, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ,

19) իրականացնում է պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը,

20) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

IV. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Բաժինը կառավարում է Տեսչական մարմնի ղեկավարը:

9. Բաժինը գործում է Բաժնի պետի անմիջական ղեկավարությամբ:

10. Բաժնի պետն անմիջական հաշվետու է Տեսչական մարմնի ղեկավարին:

11. Բաժնի կողմից ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Տեսչական մարմնի ղեկավարը:

V. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Բաժնի կառուցվածքում ներառված չեն ներքին կառուցվածքային միավորներ: